

նում: Գորգը կտրելով ընկնում է նրա վրայ: Հանում են ասպը տալիս մի տղայի որը ձի շինած դուրս է վազում, եթէ փողոցում առաջին անգամ տղայի է պատահում, ասել է այդ կինը տղայ կը ծնի, եթէ աղջկայ է պատահում՝ աղջիկ»¹: Ահաւասիկ հին գրեթէ նախաքրիստոնէական սովորութիւն մը որ վերապրեր է Ղարաբաղի անթափանցելի շրջանին մէջ, կորսնցնելով իր ինչ ինչ մանրամասնութիւնները, որոնք սակայն դիւրաւ կարելի է ճշդել ու ամբողջացնել: Այդ մանրամասնութիւնն է վիշապին գոյութիւնը գորգին մէջ: Անտարակուսելի է որ այս աւանդութիւնը կամ սովորութիւնը յատուկ էր միայն վիշապով գորգերուն, որ սակայն իր սկզբնական վիճակէն շեղած և Ղարաբաղցուց մէջ մնացած է իբր որեւէ գորգի: Դարերը՝ որոնց մէջէն ստիպուած էր անցնիլ այդ սովորութիւնը՝ խղճամիտ են եղած միայն այդքան բան մը փոփոխելով գոհանալուն համար²:

Վերոգրեալին համար վաւերական նւագաստ մըն ալ: Այժմու գոյութիւն ունեցող հնագոյն Վիշապ գծածելով Հայկական Գորգերը ընդհանուր միաձայնութեամբ ընդունուած է որ Ղարաբաղէն են: Որով Ղարաբաղ աւանդութեանց պահպան ըլլալէ զատ նաեւ արուեստը՝ իր բնատրիպով պահպանած է, և հաւատարմութեամբ մը որ՝ բիչ կամ շատ՝ կայ վերջապէս, մեզի կտակած է այդ թանկագին նշխարները գորգին և վիշապին վրայօր: Անշուշտ այս ալ ունի իր պատճառները որոնք կրնամ բացատրել:

Հայ աշխարհի զանազան շրջաններուն մէջ հիւսուածեղէններու զանազան տեսակներ զարգացած էին: Երզնկայի մէջ Պոմպակին (պուգերամ), Մշոյ մէջ Պոքասին, Տիարպէքիւրի մէջ տարբեր բանուածներ, արեւմտեան Հայաստանի սահմաններուն վրայ մանուսաններ, Հայաստանի զանազան կողմերը տարբեր շղարշներ, կերպասներ, զանազան տեսակ կապերոսներ (քիւլիմ), այծի մազէ հիւսուածեղէններ, գորգեր, եւն., եւն.: Այս տարբերող

հոգամասերը ունէին իրենց յատուկ հիւսելու, ներկելու, գծելու արուեստի և արհեստի մասնաբաժանումները: Ասոնք ալ իրենց կարգին իրենց զարգացման շրջանները ունեցան:

Վիշապ գորգերէն զատ Հայաստանի մէջ կը հիւսուէին տարբեր գծածելով գորգեր ալ, այս մասին տարակուսելու չէ: Սակայն վիշապ գծածելը ընդհանրապէս աւելի շատ կը գործածուէր Հին Հայաստանի հիւսիսային կեդրոնական մասին արեւելեան շրջաններուն մէջ: Արեւմտեան կողմերը քրիստոնէութեան երեւումով, բիւզանդական ազդեցութեամբ, և հարաւային Հայաստանի մէջ Արար — Մահմետական արշաւանքներուն սկզբնական ճնշումին պատճառաւ, նաեւ հետեւորդ երեւութեան ազատութեան շրջանին. խալիֆաներու պահանջները ու ազանութիւնը այդ նոյն վիշապ գորգերու արհեստ—արուեստը ալ աւելի սահմանափակեցին, նախապէս յիշած հոգամասերուն մէջ, առանց սակայն հոն զանոնք անաղարտ թողլու: Հայաստանի այդ սեղմեալ արեւելեան ծայրագաւառներէն կարեւորներէն մին եղաւ Սիւնեաց աշխարհը և անմիջական լեռնային շրջանները, Հայկական ազդեցութեան տակ զանուող Ալուանից աշխարհը, որոնք այժմ ծանօթ են իբր Ղարաբաղ, Գաղազ, Շիրուան, Տաղիսթան (Գապիսթան) նաեւ Շամախ: Կ'արժէ չմոռնալ նաեւ կենճէի, Գազազճայի շրջանիկները, ուր ղեռ հաւատարիմ հին աւանդութեանց նախկին գծածեւերու, հայ թէ մահմետական կը բանին հայկական գորգեր: Վիշապի գրծածելով գորգերուն նահանջին նման եղաւ նաեւ Արարական ազդեցութեան արդիւնք եղող քիւֆի գրածեւ գորգի հայկական

1. «Բուրդ գզելը և զորգ գործելը Ղարաբաղում».
Կ. Կ. Մելիք Շահնազարեան. «Հանդէս Ամսօրեայ»,
1928, էջ 477:

2. Զարմանալի է որ ԺԳ — ԺԶ դարու եւրոպական
այն նկարներուն մէջ ուր գորգը ներկայացուած է, ա-
մէնքն ալ կը կրէին Ս. Կոյսը և Մանուկ Յիսուս Բա-
ցառութիւն է Հոլլէյնի նկարը: